

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

22.11.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-3» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«27» «11» 2019թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Մ.Ս.Բիշարյանի, և «Յուսիմայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Մաջարյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-3 գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 8.15-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 18-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում վերոհիշյալ որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-3» գնման պայմանագրի շրջանակներում հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց (վճարման ժամանակացույց) համաձայն կից հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-3» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Ապրանքների մատակարարումն իրականացվելու է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ միանվագ մինչև 15.12.2019թ.:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական
Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1
Գանձապետարան
h/h 900018001975
ՀՎՀՀ – 00405431
Տնօրեն՝ Մ.Ս.Բիշարյան



ՎԱՃԱՌՈՂ

«Յուսիմայն» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Ն.Զարյան 17/32
Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ՝ 1510023737520100
ՀՎՀՀ 01015289
Տնօրեն՝ Գ.Մաջարյան

